ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«20» 03 2023թ.
№ ԿԲԵՄ/2-416

«ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ (ՀՎՀՀ 02835316)
ՀՀ, ք. Աբովյան 23
հեռ.094277400
էլ. փոստի հասցե՝ argg.llc@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱՐՋԻՋԻ» ՍՊ ընկերության միջև 18.02.2022թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-22-9/1-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և 23.06.2022թ. պայմանագրին կից կնքված համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) շրջանակներում «ԱՐՋԻՋԻ» ՍՊ ընկերությունը 2022թ. 4-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 1000 հատ «Օքսոլին» և «Լորնօքսիկամ»՝ 700 հատ 3-րդ և 700 հատ 4-րդ եռամսյակներում, որոնք չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2023թ. մարտի 20-ին** միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում ենք, որ «ԱՐՋԻՋԻ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **60237** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), տույժը հաշվարկված է մինչև 30.12.2022թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **264 830** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **397 245** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև **2023թ. մարտի 29-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **397 245** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **264 830** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԱՐՋԻՋԻ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև **2023թ. մարտի 29-ը** ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2076 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ